- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Գոռ Երիցյանին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող թվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ. Հունվարի 30
ք. Արմավիր

ԴԱՎԻԹ ԽՈՒՂԱԹՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 0262-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 05.12.22 թվականի թիվ 205-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Կարինե Արամյանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բավարարել Ա/Ձ Կարինե Արամյանի հայտը և թույլատրել ք. Արմավիր Վ. Համբարձումյան 35 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ծխախոտի արտադրանքի վաճառքով:
2. Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Կարինե Արամյանին տալու համապատասխան թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ. Հունվարի 30
ք. Արմավիր

ԴԱՎԻԹ ԽՈՒՂԱԹՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 0263-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 05.12.22 թվականի թիվ 205-Ն որոշմամբ և հիմք ընդունելով "Միսակ Մեծ" ՍՊԸ-ի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Բավարարել "Միսակ Մեծ" ՍՊԸ-ի հայտը և թույլատրել ք. Արմավիր Շահումյան 3/7 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների իրացումով:
- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին "Միսակ Մեծ" ՍՊԸ-ին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023 թ. Հունվարի 30
ք. Արմավիր



ՂԱՎԻԹ ԽՈՒՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 0264-Ա

24-00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի <<Համայնքի տարածքում հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն տալու կարգը սահմանելու մասին>> թիվ 962-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 05-ի <<Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2023 թվականի դրույքաչապերը սահմանելու մասին>> թիվ 205-Ն որոշմամբ և հիմք ընդունելով "Դիջիթեյն" ՍՊԸ-ի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- 1.Բավարարել "Դիջիթեյն" ՍՊԸ-ի հայտը և թույլատրել ք.Արմավիր Չարենցի 4 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվել առևտրով 24:00-ից հետո :
- 2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային նկատմունքների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին "Դիջիթեյն" ՍՊԸ-ին տալու համապատասխան թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ. Հունվարի 30
ք. Արմավիր

ԴԱՎԻԹ ԽՈՒՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 0265

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՅԳԵՎԱՆ ԳՅՈՒՂԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 15/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՎՈՐԳ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2022թ. հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշումը, հիմք ընդունելով Գևորգ Սահակյանի 06.12.2022 թ. թիվ 6549 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվան գյուղի 04-062-0019-0025 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Վերականգնել Գևորգ Սահակյանի /ծնված 19.03.1962թ./ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Այգեվան գյուղի 04-062-0019-0025 կադաստրային ծածկագրից գույքային միավորների՝ 68.1 քմ օրինական հողամասի վրա 1948թ. կառուցված 34.20 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ:

2.Գևորգ Սահակյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Այգեվան գյուղ 04-062-0019-0025 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Այգեվան գյուղ 5-րդ փողոց 15/2:

3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ.հունվար 30
ք. Արմավիր



Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 266-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԱՌՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ՍԱԹԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ԳԵՎՈՐԳ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ՕՖԵԼՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Գառնիկ Ավետիսյանի 08.12.2022 թ. թիվ 6609 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Գառնիկ Ավետիսյանին, Սաթիկ Հարությունյանին, Գևորգ Ավետիսյանին, Օֆելյա Ավետիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-016-0002-0008 ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արաքս գյուղ, 1-ին թաղամաս, 1-ին փողոց, 34:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. հունվարի 30
ք. Արմավիր



Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 267-Ա

ԱՐՄԵՆ ՎՈԱՄԻ ԽԼՂԱԹՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Արմեն Վոամի խլղաթյանի 01.06.2022թ. թիվ 2983 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմեն Վոամի խլղաթյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Այգեվան գյուղում գտնվող 04-062-0002-0006 ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Այգեվան գյուղ, 11-րդ փողոց, 5-րդ հողամաս::

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 30.06.2022թ. թիվ 609-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ.ԽՈՒՂԱԹՅԱՆ

2023 թ. հունվար 30
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 0268-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասով, 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի հունվարի 17-ի թիվ 01/10.1/00289 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանում համայնքային ծառայության էթիկայի հանձնաժողով և սահմանել անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ. հունվարի 30
ք. Արմավիր



Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 269-Ա

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 217-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 1-ի թիվ 206 կարգադրությամբ ստեղծված Արմավիր համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծված մշտական հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 30-ի թիվ 0601 եզրակացությունը, ընդառաջելով Արմավիր քաղաքի Չարենց փողոցի 33 շենքի 20 բնակարանի բնակչուհի Աշխեն Լյովայի Ավագյանի, Թումանյան փողոցի 76 տան բնակիչ Վանուշ Հովհաննեսի Սաֆարյանի, Շինարարների փողոցի 41 շենքի 43 բնակարանի բնակչուհի Արժելա Թևանի Գյուլբանդյանի, Լեւոնտով փողոցի 85 տան բնակիչ Հովհաննես Սամվելի Բարսեղյանի, Հայրենյաց փողոցի 15 տան բնակչուհի Արվալույս Իվանի Մարտիրոսյանի, Հանրապետության փողոցի 12 շենքի 16 բնակարանի բնակիչ Համբարձում Մերուժանի Մանուկյանի, Վ Համբարձումյան փողոց 19ա տան բնակչուհի Կարինե Միշայի Մանուկյանի, Սահմանապահների փողոցի 45 շենքի 24 բնակարանի բնակչուհի Ամալիա Անդրանիկի Մանուկյանի, Մաշտոց փողոցի 50 տան բնակչուհի Քրիստինա Անդրեյի Գրիգորյանի, օգնության դիմումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմավիր համայնքի բյուջեի 10 բաժնի 07 խմբի 01 դասի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի ծախսերի 4729 հոդվածից 20.0 հազարական դրամ օգնություն հատկացնել՝ Վանուշ Հովհաննեսի Սաֆարյանին, Արժելա Թևանի Գյուլբանդյանին, Արվալույս Իվանի Մարտիրոսյանին, Համբարձում Մերուժանի Մանուկյանին, Ամալիա Անդրանիկի Մանուկյանին, 30.0 հազար դրամ՝ Քրիստինա Անդրեյի Գրիգորյանին, 50.0 հազարական դրամ՝ Հովհաննես Սամվելի Բարսեղյանին, Կարինե Միշայի Մանուկյանին, 100.0 հազար դրամ՝ Աշխեն Լյովայի Ավագյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ԽՈՒՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 0270-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 05.12.22 թվականի թիվ 205-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Արմինե Աբգարյանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բավարարել Ա/Ձ Արմինե Աբգարյանի հայտը և թույլատրել ք.Արմավիր Հանրապետության 39 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:
2. Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Արմինե Աբգարյանին տալու համապատասխան թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ. Հունվարի 31
ք. Արմավիր



ԴՎԱԿԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 0271-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 31-ի <<Արմավիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կարգ ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 57-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 05-ի <<Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2023 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 205-Ն որոշմամբ և հիմք ընդունելով "ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ" ՓԲԸ-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բավարարել "ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ" ՓԲԸ-ի դիմումը և թույլատրել ք.Արմավիր Հանրապետության փ. 7 շ. հասցեում արտաքին գովազդ տեղադրելը:
2. Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության քաժնին "ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ" ՓԲԸ-ին տալու համապատասխան թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. Հունվարի 31
ք. Արմավիր

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 0272-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 31-ի <<Արմավիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կարգ ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 57-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 05-ի <<Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2023 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 205-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արման Գևորգյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- 1.Բավարարել Արման Գևորգյանի դիմումը և թույլատրել ք.Արմավիր Երևանյան 15/2 հասցեում արտաքին գովազդ տեղադրելը:
- 2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության քաժնին Արման Գևորգյանին տալու համապատասխան թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ. Հունվարի 31
ք. Արմավիր



ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 0273-Ա

**ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 079-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 1165-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46.2-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2023 թվականի հունվարի 19-ի N 01/10.1/00342 գրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Ալինա Ալեքսանի Հովհաննիսյանին նշանակել Արմավիրի համայնքապետարանի հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատու անձ:

2.Արմավիր համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի 27-ի թիվ 079-Ա որոշմամբ հաստատված հավելված 13-ի «Իրավունքները և պարտականությունները» բաժնում կատարել հետևյալ լրացումը՝

«ը) ապահովում է Արմավիրի համայնքապետարանում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը՝

1. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն՝

1) պարտավոր է իր իրավասության շրջանակներում համագործակցել իրավասու մարմինների հետ, ապահովել ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների իրականացումը, հաշվետվությունների տրամադրումը, ինքնագնահատման

զեկույցների կազմումը, հարցաշարերի լրացումը, մասնակցությունը հակակոռուպցիոն ոլորտին առնչվող քննարկումներին,

2) պարտավոր է տրամադրել Արմավիրի համայնքապետարանի գործառույթներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված՝ հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, պարզաբանումներ, միջոցներ ձեռնարկել Արմավիրի համայնքապետարանի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ,

3) իրավունք ունի Արմավիրի համայնքապետարանի կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակներում Արմավիրի համայնքապետարանի ստորաբաժանումներից պահանջելու և ստանալու տեղեկատվություն,

4) իրավունք ունի հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիտորինգի համար պատասխանատու մարմնից պահանջելու և ստանալու մեթոդական աջակցություն, խորհրդատվություն ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների վերաբերյալ:»

3. Ուժը կորցրած ճանաչել Արմավիր համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1165-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ. հունվարի 31
ք. Արմավիր



Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 0274-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 05.12.22 թվականի թիվ 205-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Գայանե Գոլովորյանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Բավարարել Ա/Ձ Գայանե Գոլովորյանի հայտը և թույլատրել Արմավիր համայնք, գ. Մայիսյան 1 փ.39/1 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:
- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Գայանե Գոլովորյանին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023 թ. Փետրվարի 1
ք. Արմավիր



ՂԱՎԻԹ ԽՈՒՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 0275-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԻՐԱՅՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 05.12.22 թվականի թիվ 205-Ն որոշմամբ և հիմք ընդունելով "Սպորտ Կոկտեյլ" ՍՊԸ-ի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Բավարարել "Սպորտ Կոկտեյլ" ՍՊԸ-ի հայտը և թույլատրել ք. Արմավիր Չարենց 4 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների իրացումով:
- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին "Սպորտ Կոկտեյլ" ՍՊԸ-ին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման և հաստատվող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

20 23թ. Փետրվարի 2
ք. Արմավիր



Դ. ԽՈՒՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 թվականի N 0276-Ա

24-00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Համայնքի տարածքում հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն տալու կարգը սահմանելու մասին>> թիվ 962-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 05-ի <<Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2023 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 205-Ն որոշմամբ և հիմք ընդունելով "Սպորտ Կոկտեյլ" ՍՊԸ-ի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Բավարարել "Սպորտ Կոկտեյլ" ՍՊԸ-ի հայտը և թույլատրել ք.Արմավիր Չարենց 4 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվել հանրային սննդի կազմակերպմամբ 24:00-ից հետո:
2. Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային ձեկանությունների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին "Սպորտ Կոկտեյլ" ՍՊԸ-ին տալու համապատասխան թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. Փետրվարի 2
ք. Արմավիր



Դ. ԽՈՒՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 0277-Ա

ՍԵՂՐԱԿ ԴՇԽՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԴՇԽՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Սեղրակ Դշխունյանի 31.01.2023 թ. թիվ 0625 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սեղրակ Դշխունյանին և Հարություն Դշխունյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի Ա.Թամանյան փողոց 16 հասցեում գտնվող 0.0777 հա մասին տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի Ա.Թամանյան փողոց 16/1, իսկ 0.1385 հա մասի հասցեն թողնել նույնը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի Ա.Թամանյան փողոց 16:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. փետրվարի 02
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 փետրվարի 2023 թվականի N 0278-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 13-Ն հրամանի 11 կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2023 թվականի մարտի 02-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնի մրցույթ:

ա) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի՝ /ծածկագիր 2.1-7/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարել և անցկացնել 2023 թվականի մարտի 02-ին ժամը 10:00-ին, ք. Արմավիր Հանրապետության 32 հասցեում:

2. Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ Սաթենիկ Մարտիրոսյանին՝ կազմել մրցույթի հայտարարության տեքստը և այն հրապարակել azdarar.am ինտերնետային կայքում:

3. Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմին (Ֆելիքս Պետրոսյան)՝ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի, հանձնաժողովի աշխատակարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

4. Մրցույթի անցկացման տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Տեխնիկական և սպասարկող անձնակազմի գործավար Ստելլա Հարությունյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. փետրվարի 02

ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 0279-Ա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՆՅԱԶՅԱՆԻՆ ԵՎ ԿՆՅԱԶ ԿՆՅԱԶՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2023թ. հունվարի 11/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Հովհաննես Կնյազյանի 16.01.2023թ. թիվ 0248 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հովհաննես Կնյազյանին և Կնյազ Կնյազյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Սարգարապատ գյուղ 04-059-0066-0013 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Սարգարապատ 16-րդ փողոց 30:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, որի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. փետրվար 02
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 փետրվարի 2023 թվականի N 0280-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՔԻ
ՍԱՐԴԱՐԱԿԱՏ ԳՅՈՒՂԻ 26 ՓՈՂՈՑ 74 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՀՈՒՓՍԻՄԵ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻ,
ՏԱԹԵՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ, ԱՆԳԵԼԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ, ԱՇՈՏ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, հիմք ընդունելով Հոփսիմե Սարուխանյանի 28.12.2022թ. թիվ 7033 դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2022թ. դեկտեմբերի 21/ և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 04-059-0004-0029 ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սփրվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Հոփսիմե Սարուխանյանի /ծնված 16.07.1965թ./, Տաթևիկ Հովհաննիսյանի /ծնված 10.04.1982թ./, Անգելինա Հովհաննիսյանի /ծնված 08.03.1985թ./, Աշոտ Հովհաննիսյանի /ծնված 29.01.1987թ./ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 04-059-0004-0029 ծածկագրով գույքային միավորների՝ 942.0

քմ օրինական հողամասի վրա 1993թ. կառուցված 154.8 քմ բնակելի տան նկատմամբ, իսկ անասնաշենքը, ծածկը և պարիսպը համարել ինքնակամ:

2. Հռիփսիմե Սարուխանյանին, Տաթևիկ Հովհաննիսյանին, Անգելինա Հովհաննիսյանին, Աշոտ Հովհաննիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 04-059-0004-0029 ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Սարդարապատ գյուղ, 26-րդ փողոց 74:

3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. Փետրվարի 02
ք. Արմավիր



Դ. ԽՈՒՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 0281-Ա

<<ՍՈՆԱ ԵՎ ԼԵՎՈՆ>> ԱԿ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, <<ՍՈՆԱ ԵՎ ԼԵՎՈՆ>> ԱԿ նախագահ Լ.Հովհաննիսյանի 21.12.2022թ. թիվ 6849 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ՍՈՆԱ ԵՎ ԼԵՎՈՆ>> ԱԿ-ին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մայիսյան գյուղ 04-043-0436-0037 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մայիսյան գյուղ Հարավային թաղամաս 1:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ. փետրվար 02
ք. Արմավիր



Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 0282-Ա

ՌՈՒԶԱՆՆԱ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ԾՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Ռուզաննա Պապիկյանի 29.12.2022 թ. թիվ 7059 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ռուզաննա Պապիկյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի գյուղ Մյասնիկյան 04-066-0008-0007 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մյասնիկյան Պ.Սևակի փողոց 13:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:


3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ.ԽՈՐԴԱԹՅԱՆ

2023 թ. փետրվար 02
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 0283-Ա

ՀՐԱՆՏ ՄԻՍԱԿԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Հրանտ Մելիքյանի 24.01.2023թ. թիվ 0462 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հրանտ Մելիքյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Սարգարապատ գյուղ 04-059-0120-0018 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Սարգարապատ 28-րդ փողոց 26:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ. փետրվար 02
ք. Արմավիր

Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 փետրվարի 2023 թվականի N 0284-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼՎԻՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Ալվինա Մելքոնյանի 24.01.2023 թ. թիվ 0458 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Ալվինա Մելքոնյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղում գտնվող 04-066-0028-0021 ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մյասնիկյան գյուղ, Ա. Խանջյան փողոց, 36:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ. փետրվարի 02
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 0285-Ա

ՌԱԶԻԴ ՕԶՄԱՆՅԱՆԻՆ, ՌՈԶԱ ՕԶՄԱՆՅԱՆԻՆ, ՆՈՐԻԿ ՕԶՄԱՆՅԱՆԻՆ, ԽԴՐ ՕԶՄԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԳՈՀԱՐ ՕԶՄԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Ռաշիդ Օզմանյանի 27.12.2022թ. թիվ 6953 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ռաշիդ Օզմանյանին, Ռոզա Օզմանյանին, Նորիկ Օզմանյանին, Խդր Օզմանյանին և Գոհար Օզմանյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղ 04-059-0001-0003 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Սարդարապատ 27-րդ փողոց 42:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. փետրվար 02
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 0286-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 59 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՐԳԵՆ ԼԻՊԱՐԻՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով և ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2022թ. ապրիլի 11/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Գուրգեն Լիպարիտի Հարությունյանի 02.06.2022թ. թիվ 2995 դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Գուրգեն Լիպարիտի Հարությունյանի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 04-043-0453-0003 կադաստրային ծածկագրով 340.2 քմ ընդհանուր մակերեսով անասնաշենքի զբաղեցրած 0.1468 հա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը՝ ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Գուրգեն Լիպարիտի Հարությունյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 04-043-0453-0003 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մայիսյան գյուղ 1-ին փողոց 59:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ. փետրվար 02
ք. Արմավիր

Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 թվականի N 0287-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ և 13-րդ կետերի <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N 600-Ն որոշման 1-ին հավելվածի 4-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, և ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ Սանասար Կարապետյանի 13.12.2022 թվականի թիվ 6677 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Սեփականության իրավունքով (հիմք՝ սեփականության N 12122022-04-0055 վճիյական) Սանասար Մնացականի Կարապետյանին, Ռոզա Անուշավանի Ներսիսյանին, Արմեն Սանասարի Կարապետյանին, Տիգրան Սանասարի Կարապետյանին, Արմենուհի Սանասարի Կարապետյանին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Լենուդի գյուղի 3-րդ փողոց 19 հասցեում 837.1 քմ մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 25.5 քմ ներքին և 29.9 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 5.6 քմ ներքին և 6.6 քմ արտաքին մակերեսով թոջնանոցը, 6.2 քմ ներքին և 8.5 քմ արտաքին մակերեսով խորդանոցը, 23.2 քմ ներքին մակերեսով ծածկը և 4.9 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ իքնական կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ արտաքին 73.1 քմ մակերեսով ինքնական օժանդակ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 524.4 ՀՀ դրամ ընդհանուր 38397 (երեսունութ հազար երեք հարյուր ինիսունյոթ) ՀՀ դրամ:

4. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 0286-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՄԱՅԻՍՅԱՆ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 59 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՐԳԵՆ ԼԻՊԱՐԻՏԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով և ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2022թ. ապրիլի 11/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Գուրգեն Լիպարիտի Հարությունյանի 02.06.2022թ. թիվ 2995 դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Գուրգեն Լիպարիտի Հարությունյանի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 04-043-0453-0003 կադաստրային ծածկագրով 340.2 քմ ընդհանուր մակերեսով անասնաշենքի զբաղեցրած 0.1468 հա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը՝ ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Գուրգեն Լիպարիտի Հարությունյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 04-043-0453-0003 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մայիսյան գյուղ 1-ին փողոց 59:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ.փետրվար 02
ք. Արմավիր

Դ.ԽՈՒՂԱԹՅԱՆ

76016



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 փետրվարի 2023 թվականի N 0288-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Արամ Վարդանյանի 16.01.2023 թ. թիվ 0243 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- 1.Արամ Վարդանյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-016-0016-0008-001 ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արաքս գյուղ, Վ. Ալիխանյան փողոց, 11:
- 2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- 4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. փետրվարի 02
ք. Արմավիր



Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 փետրվարի 2023 թվականի N 0289-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2023թ. հունվարի 26/ Հովհաննես Հովհաննիսյանի 31.01.2023 թ. թիվ 0619 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հովհաննես Հովհաննիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղում գտնվող 04-066-0055-006 ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մյասնիկյան գյուղ, Հ. Բաբաջանյան փողոց, 43:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 0290-Ա

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 217-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 1-ի թիվ 206 կարգադրությամբ ստեղծված Արմավիր համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծված մշտական հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 1-ի թիվ 0668 եզրակացությունը, ընդառաջելով Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի Թումանյան փողոց 107 տան բնակիչ Արթուր Արամի Հարությունյանի, Այգեվան գյուղի 2-րդ փողոցի 42 տան բնակչուհի Նարինե Գևորգի Գոգինյանի, Այգեվան գյուղի 2-րդ փողոցի 9 տան բնակչուհի Հասմիկ Սուրենի Գինոսյանի, Խանջյան գյուղի 12 փողոցի 17/2 տան բնակչուհի Գայանե Համլետի Մուրադյանի, Լուկաշին գյուղի Հ. Ավետիսյան փողոց 2-րդ նրբանցք 3 շենք 65 բնակարանի բնակչուհի Անահիտ Դավիթի Սարգսյանի, Մայիսյան գյուղի 2-րդ փողոց 2-րդ շենք 19 բնակարանի բնակչուհի Լուսիկ Արմենակի Գևորգյանի, Մայիսյան գյուղի Թարվերդյան փողոցի 17 տան բնակիչ Պետրոս Մանուկի Սարգսյանի օգնության դիմումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիր համայնքի բյուջեի 10 բաժնի 07 խմբի 01 դասի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի ծախսերի 4729 հոդվածից 20.0 հազարական դրամ օգնություն հատկացնել՝ Գայանե Համլետի Մուրադյանին, Անահիտ Դավիթի Սարգսյանին, Լուսիկ Արմենակի Գևորգյանին, Պետրոս Մանուկի Սարգսյանին, 25.0 հազար դրամ՝ Նարինե Գևորգի Գոգինյանին, 30.0 հազար դրամ՝ Հասմիկ Սուրենի Գինոսյանին, 300.0 հազար դրամ՝ Արթուր Արամի Հարությունյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՂԱԿԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. փետրվարի 2
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 փետրվարի 2023 թվականի N 0291-Ա

ԳՈՀԱՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԶՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ տնօրեն Գոհար Պողոսյանի 2023 թվականի փետրվարի 02-ի թիվ 0706 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- 1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ տնօրեն Գոհար Պողոսյանին տրամադրել չվճարվող արձակուրդ 4 օրացուցային օր՝ 2023 թվականի փետրվարի 6-9-ը ներառյալ:
- 2.Գոհար Պողոսյանին՝ աշխատանքի ներկայանալ 2023 թվականի փետրվարի 10-ին:
- 3.Նշված ժամանակահատվածում «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ տնօրեն Գոհար Պողոսյանի պարտականությունները վերապահել դպրոցի քանոնի դասատու Սուսաննա Ավետիսյանին:
- 4.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ հաշվապահին՝ ի գիտություն:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ԽՈՒՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 փետրվարի 2023 թվականի N 0292-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՄՈՎՍԵՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Մովսես Հովսեփյանից 28.12.2022 թ. թիվ 7051 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մովսես Հովսեփյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0201-0009 ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մայիսյան գյուղ, Հյուսիսային թաղամասի 2-րդ փողոց, 10/1:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. փետրվարի 02
ք. Արմավիր

Դ. ԽՈՒՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 292-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ԳՅՈՒՂԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ 33 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԽԱԶԱՏՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ,ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ
ԱԼՎԱՐԴ ՄՈՎՍԻՍՅԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը տրված 25 հունվարի 2023 թվականին և հիմք ընդունելով Արամ Կարապետյանի 26.01.2023 թ. թիվ 0549 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 04-059-0094-0002 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Ալվարդ Մովսիսյանի /ծնված 05.01.1960թ./, Խաչատուր Կարապետյանի /ծնված 27.12.1984թ./ և Արամ Կարապետյանի /ծնված 10.09.1986թ./ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 04-059-0094-0002 կադաստրային ծածկագրով գույքային միավորների՝ 2314.0 քմ օրինական հողամասի վրա 1954թ. կառուցված 59.0 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ, իսկ օժանդակ շինությունը, խորդանոցը, անասնաշենքը, ծածկը և պարիսպները համարել ինքնակամ:

2. Ալվարդի Մովսիսյանին, Խաչատուր Կարապետյանին և Արամ Կարապետյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 04-059-0094-0002 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Սարդարապատ գյուղ 12-րդ փողոց 33:

3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ. փետրվար 02
ք. Արմավիր



Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 փետրվարի 2023 թվականի N 293-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՔԻ
ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ 107 ԹԱՂԱՄԱՍ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ
ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱՉ ՂԱՐԻՔԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ և 13-րդ կետի <<ա>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N 600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Հրաչիկ Ղարիբի Սիմոնյանի 18.01.2023 թվականի թիվ 0330 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի, Արմավիր քաղաքի 107 թաղամաս թիվ 9 հասցեում գտնվող հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Հրաչիկ Ղարիբի Սիմոնյանի /ծնված 27.07.1951թ. սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի 107 թաղամաս 9 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 600.0 քմ օրինական հողամասի վրա 1992թ. և 1998թ. կառուցված 47.1 քմ մակերեսով բնակելի տան և 0.5 քմ մակերեսով պարսպի նկատմամբ:

2. Սեփականության իրավունքով Հրաչիկ Ղարիբի Սիմոնյանին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի 107 թաղամաս թիվ 9 հասցեում 600.0 քմ մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 148.5 քմ ներքին և 168.8 քմ արտաքին մակերեսով ճանաչել օրինական:

3. ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում

4. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի 107 թաղամաս 9 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023G5SHDW:

6. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ԽՈՒՂԱԹՅԱՆ

2023թ. փետրվարի 03
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 294-Ա

ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի* 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի հ. 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հովիկ Երանոսի Աբելյանի և Հարություն Աշոտի Խաչատրյանի լիազորված անձ Սամվել Զորիկի Բաղայանի դիմումը՝ 03.02.2023թ. թիվ 0728 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող անշարժ գույքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 21072022-04-0018 վկայական) գբաղեցրած 10.3863 հա կից գյուղատնտեսական նշանակության հողամասի ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով լրացուցիչ հողամաս տրամադրելու մասին և հաշվի առնելով այն, որ ընդլայնման նպատակով, լրացուցիչ տրամադրման համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.0393 հա մակերեսով, /04-043-0485-0067/ որի ուրվագծային չափերն ու դիրքը թույլ չեն տալիս, որ այն դառնա առանձին հրապարակային սակարկությունների առարկա/ գտնվում է Հովիկ Երանոսի Աբելյանին և Հարություն Աշոտի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի միջնամանում/, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0485-0064 կադաստրային ծածկագրով 10.3863 հա գյուղատնտեսական նշանակության հողամասին կից 0.0393 հա մակերեսով

հողամասն/սեփականության վկայական 07122022-04-0062/ ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով կադաստրային գնի չափով 11300 / երկու հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր երեք/ ՀՀ դրամ արժեքով օտարել (վաճառել) Հովիկ Երանոսի Աբելյանին և Հարություն Աշոտի Խաչատրյանին:

2.Լիազորել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի ղեկավարի անունից, հողօգտագործողի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռքբերողի կողմից 15-օրյա ժամկետում հողամասի կադաստրային արժեքը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքին պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ.փետրվար 06
ք. Արմավիր

Դ.ԽՈՒՂԱԹՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 փետրվարի 2023 թվականի N 295-Ա

ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հովիկ Երանոսի Աբեյանի և Հարություն Աշոտի Խաչատրյանի լիազորված անձ Սամվել Զորիկի Բաղայանի 03.02.2023թ. թիվ 0729 դիմումը: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0485-0065 կադաստրային ծածկագրով հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.1036 հա (վկ.30012023-04-0073), որի ուրվագծային չափերն ու դիրքը թույլ չեն տալիս, որ այն դառնա առանձին հրապարակային սակարկությունների առարկա, քանի որ գտնվում է Հովիկ Երանոսի Աբեյանին և Հարություն Աշոտի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող 04-043-0485-0064 կադաստրային ծածկագրով 10.3863 հա (վկ.21072022-04-0018), մակերեսով հողամասի միջնամասում, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0485-0064 կադաստրային ծածկագրով 10.3863 հա մակերեսով հողամասին կից 0.1036 հա բնակավայրի հասարակական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով կադաստրային գնի չափով 1 քմ 1221.0 ՀՀ դրամ, ընդհանուր 1264956 /մեկ միլիոն երկու հարյուր վաթսուներես հազար ինը հարյուր հիսունվեց / ՀՀ դրամ արժեքով օտարել (վաճառել) Հովիկ Երանոսի Աբեյանին և Հարություն Աշոտի Խաչատրյանին:

2. Լիազորել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի ղեկավարի անունից, հողօգտագործողի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռքբերողի կողմից 15-օրյա ժամկետում հողամասի կադաստրային արժեքը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքին պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. փետրվարի 06
ք. Արմավիր



Դ. ԽՈՒՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2023 թվականի N 296-Ա

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 217-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 1-ի թիվ 206 կարգադրությամբ ստեղծված Արմավիր համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծված մշտական հանձնաժողովի 2023 թվականի փետրվարի 3-ի թիվ 0740 եզրակացությունը, ընդառաջելով Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ. Ավետիսյան փողոց 119 տան բնակիչ Արամ Սերյոժայի Սեդրակյանի, Սայաթ-Նովա փողոց 139 տան բնակչուհի Լուիզա Բենիամինի Մինասյանի, Գորկի փողոց 5-րդ նրբանցք 6 տան բնակչուհի Սիրվարդ Հովհաննեսի Հովհաննիսյանի, Միլիկյան փողոց 3 շենք 3 բնակարանի բնակչուհի Լուսինե Արիստակեսի Մարտիրոսյանի, Թումանյան փողոցի 17 տան բնակչուհի Մարինե Համլետի Գևորգյանի, Բաղրամյան փողոց 25 շենք 16 բնակարանի բնակչուհի Շուշանիկ Յուրիկի Գևորգյանի, Երևանյան փողոցի 20 շենք 22 բնակարանի բնակչուհի Սվետ Սիրեկանի Այվազյանի, Հանրապետության փողոց 24 շենք 52 բնակարանի բնակչուհի Հռիփսիկ Նահապետի Վարդանյանի, Բաղրամյան Փողոց 33 շենք 4 բնակարանի բնակիչ Թուրուշ Հմայակի Անթանոսյանի, Չարենց փողոց 34 շենք 7 բնակարանի բնակիչ Անժել Խաչատուրի Անդրեասյանի, Լերմոնտով փողոց 2 նրբանցք 23 տան բնակչուհի Լիլիթ Հմայակի Առուստամովայի, Բաղրամյան Գ թաղամաս 25 տան բնակիչ Արմեն Արամայիսի Սարգսյանի, Բաղրամյան փողոց 13 շենք 56 բնակարանի բնակչուհի Աղավնի Գալուստի Ադամյանի, Շահումյան փողոց 14 շենք 29 բնակարանի բնակչուհի Վիկտորիա Գարեգինի Երանոսյանի օգնության դիմումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիր համայնքի բյուջեի 10 բաժնի 07 խմբի 01 դասի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի ծախսերի 4729 հոդվածից 20.0 հազարական դրամ օգնություն հատկացնել՝ Արամ Սերյոժայի Սեդրակյանին, Լուիզա Բենիամինի Մինասյանին, Սիրվարդ Հովհաննեսի Հովհաննիսյանին, Մարինե Համլետի Գևորգյանին, Սվետ Սիրեկանի Այվազյանին, Հռիփսիկ Նահապետի Վարդանյանին, Թուֆուշ Հմայակի Անթանոսյանին, Անժել Խաչատուրի Անդրեասյանին, Լիլիթ Հմայակի Առուստամովային, Աղավնի Գալուստի Ադամյանին, Վիկտորիա Գարեգինի Երանոսյանին, 30.0 հազարական դրամ՝ Լուսինե Արիստակեսի Մարտիրոսյանին, Շուշանիկ Յուրիկի Գևորգյանին, 40.0 հազար դրամ՝ Արմեն Արամայիսի Սարգսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. փետրվարի 6
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 297-Ա

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2023թ. հունվարի 05/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Գագիկ Հովհաննիսյանի 09.01.2023թ. թիվ 0062 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գագիկ Հովհաննիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Սարգարապատ գյուղ 04-076-0015-0006 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Նորավան 5-րդ փողոց 24:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. փետրվար 06
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 298-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՇԱՎԻՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ Քաղաքաշինության մասին օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ, քաղաքաշինության կոմիտեյի և մարզպետի 2022 թվական 26 դեկտեմբերի դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ, 49-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թ հունիսի 24-ի 135-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստի 006-Ա որոշումը, քաղաքացի Արշավիր Ավետիսյանի 17.02.2022թ. թիվ 0785 դիմումը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Արշավիր Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 04-043-0475-0086 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 1.1288 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի:

2.Արշավիր Ավետիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0475-0057 կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի

Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնք Մայիսյան գյուղ Երևան-Արմավիր մայրուղի 38-39 կմ, 40 հողամաս:

3.Հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքային հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքային հողային հաշվեկշռում:

4.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 30-ը հունվարի 2023թ. թիվ 0251-Ա որոշումը:

5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թ.փետրվար 07
ք. Արմավիր



Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 299-Ա

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ 2023Թ ԾԱԽՍԵՐԻ
ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 26.12.2022թ. թիվ 217-Ն որոշման 8-րդ կետով, հիմք ընդունելով 2023 թվականի ՀՀ պետական բյուջեի «Այլընտրանքային ծառայության ապահովում» ծրագրով տնտեսագիտական դասակարգման «այլ ընթացիկ դրամաշնորհներ հոդվածով 12.01.2023 թվականի Դրամաշնորհի հատկացման պայմանագիր N 1-ը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության 05 բաժնի 1 խմբի 1 դասի «Աղբահանություն» ծրագրի ծախսերի «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 հոդվածից պակասեցնել 750,0 հազար դրամ և ավելացնել «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածին:
- 2.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության 2023թ-ի ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 300-Ա

ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Գալուստ Հակոբյանի 21.12.2022թ. թիվ 6859 դիմումը՝ Արմավիր համայնքի Ռ.Եղոյան փողոցի 62-64 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20122022-04-0060 վկայական) հասցեում գբաղեցրած տարածքի ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով լրացուցիչ հողամաս տրամադրելու մասին և հաշվի առնելով այն, որ ընդլայնման նպատակով, լրացուցիչ տրամադրման համար Արմավիր համայնքի Ռ.Եղոյան փողոց 70 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.00437 հա, որի ուրվագծային չափերն ու դիրքը թույլ չեն տալիս, որ այն դառնա առանձին հրապարակային սակարկությունների առարկա, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի հ.102-Ն որոշմամբ հաստատված Արմավիր համայնքի գլխավոր հատակագծի համաձայն՝ հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գալուստ Հակոբյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ռ.Եղոյան 62-64 հասցեին կից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք Արմավիր քաղաք Ռ.Եղոյան փողոց 70 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 02022023-04-0089 վկայական) հասցեում գտնվող 0.00437 հա հողամասն ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով 1 քմ հողամասի համար 4441.8 հազ. դրամ՝ ընդհանուր 194107 /մեկ հարյուր իննսունչորս հազար հարյուր յոթ/ ՀՀ դրամով օտարել (վաճառել) Գալուստ Հակոբյանին:

2. Վաճառքի գնին հավելվում են մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 26000 (քսանվեց հազար) ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է վճարել 220107 (երկու հարյուր քսաներկու հազար հարյուր յոթ) ՀՀ դրամ:

2. Ընդհանուր գույքերին Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնք Արմավիր քաղաք Ռ.Եղոյան փողոց 62-64 և 70 տալ միասնական հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնք Արմավիր քաղաք Ռ.Եղոյան փողոց 62-64:

3. Լիազորել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ Արմավիր համայնքի ղեկավարի անունից, հողօգտագործողի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռքբերողի կողմից 15-օրյա ժամկետում հողամասի կադաստրային արժեքը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. ԽՈՒՂԱԹՅԱՆ

2023 թ. փետրվար 07
ք. Արմավիր

